

ՆԱՅԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Նայ Պերական ծառայողների Միություն

ՀՈԳԵՎՈՐ ԲԱՐՈՅԱԿԱՆ ՍԿՋԲՈՒՆ-ՔՆԵՐԸ ՈՐՊԵՍ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄ

*Պերության արժանապատվությունը վերջին
հաշվով կախված է այն կազմավորող անհատ-
ների արժանապատվությունից:*

Զ. ՄԻՍԻ

Վերջին տասնամյակում տեղի ունեցած աշխարհաքաղաքական ցնցումները անճանաչելիորեն փոխել են «երկրեն աշխարհի» կառուցվածքը: Սոցիալիստական բևեռի անկումը՝ հանգեցրել է մոր տմտեսական, քաղաքական, գաղափարախոսական ըմբռումների առաջ գալուն: Նախկին սոցիալիստական պետությունները հայտնվել են քաղաքական, սոցիալ-տնտեսական, մշակութային և ազգամիջյան հակամարտությունների բավականին բարդ իրավիճակում: Հրաժարվելով մախորդ գաղափարախոսությունից և ամբողջովին չընդունելով մորը՝ այդ պետությունները կանգնել են բարդ ընտրության առջև. հետախուզարգացման ի՞նչ ուղի ընտրել, ի՞նչ կողմնորոշիչներով առաջնորդվել:

Տնտեսավարման ազատ շուկայական հարաբերությունների քաղաքականության որդեգրումը հրամայաբար թելադրում է «լիբերալ արժեքների» անվերապահ ընդունում, սակայն իրականում այդ գործընթացը բավականին դժվար և ցավազին է, քանզի յուրաքանչյուր պետություն, յուրաքանչյուր ազգ ունի ուրույն ազգային ցավազիր, և բավականին դժվար է հնի ու մորի համադրությունից ստեղծել որևէ մոր գաղափարախոսություն, որը օրգանապես կնպաստի այդ պետությունների զարգացմանը: Անցման շրջանի պետությունների համար բավականին դժվար է ճիշտ կողմնորոշվել: Այդ պետությունների քաղաքական ուժերից պահանջվում է քաղաքական կամքի դրսևորում՝ զարգացման ճիշտ ուղի և արժեքային համակարգ ընտրելու համար:

Հայտնի է, որ մարդկային բնավորության ամենավատ դրսևորումները ի հայտ են գալիս այնպիսի ժամանակներում, երբ քաղաքական և տնտեսական անկայունությունը գերիշխող է դառնում հասարակության գիտակցության մեջ՝ դրանով իսկ հետին պլան մղելով հասարակական համակեցության կարևորագույն քաղաքականության մեկը՝ բարոյականության համամարդկային արժեքային համակարգը: Երբ հոգևոր և բարոյական արժեքները դադարում են վարքի դրսևորման սկզբնաղբյուր լինել, տեղի է ունենում անհատի արժեքային համակարգի ալլասերում, ինչը տարածվում է հասարակական հարաբերությունների բոլոր ոլորտների, այդ թվում՝ կառավարման համակարգի վրա, անվստահություն առաջացնում պետական կառավարման համակարգի և ժողովրդի մեջ:

Պետական կառավարումը և մասնավորապես քաղաքացիական ծառայությունը սերտորեն առնչվում է պետություն-հասարակություն, պետություն-քաղաքացի և քաղաքացի-քաղաքացի փոխհարաբերությունների ձևավորման ու բնականոն ընթացքի ապահովման հետ: Գործելով հասարակական հարաբերությունների ամբողջ դաշտում՝ քաղաքացիական ծառայությունը կոչված է կանոնակարգել և ուղղորդել այդ հարաբերությունները, և որքան հստակ, արհեստավարժ և թափանցիկորեն իրականացվի այդ գործընթացը, այնքան արդյունավետ ու արդարացի կլինեն ներհասարակական, ներազգային և ներպետական շփումները: Անշուշտ, քաղաքացիական ծառայությունից և հատկապես քաղաքացիական ծառայողի ամենօրյա գործունեությունից է կախված ինչպես տվյալ կառավարման համակարգի վերաբերյալ հասարակության կարծիքը, այնպես էլ վստահությունը պետական կառույցների նկատմամբ:

«Ժողովրդավարացման» գործընթացների սկզբից մինչ այսօր անդադար փորձեր են արվում իմաստուցիոնալ ճանապարհով կանոնակարգել պետության, կառավարման համակարգի, հասարակության և քաղաքացու պարտականությունները, ինչպես նաև պաշտպանել քաղաքացու իրավունքներն ու ազատությունները զանազան չկանոնակարգված միջամտություններից: Կատարելագործվում և բարելավվում են օրենքները՝ ընդգրկելով նորանոր ոլորտներ, սակայն իրավախախտումների և չարաշահումների մակարդակը դրանից չի նվազում: Առավել ևս չեն ամփոփանում և նորանոր ալլասերված դրսևորումներ են ձեռք բերում բարոյական խեղումները: Չենթարկվելով որևէ օրենսդրական կանոնակարգվածության՝ բարոյական կողմնորոշիչները անընդհատ փոփոխվում են «մարդու իրավունքների և ազատությունների» ժամանակակից մեկնաբանություններում՝ ստեղծելով «կախարդական շրջան»: Մի կողմից իմաստուցիոնալ կանոնակարգվածությունը ընդգրկում է մարդկային փոխհարաբերությունների կարգավորման նորանոր ոլորտներ, մյուս կողմից ամհատի եսակենտրոնությունից թելադրված «իրավունքների և ազատությունների» համակարգը անընդհատ փոփոխում և ընդլայնում է չկանոնակարգված փոխհարաբերությունների դաշտը:

Կարևորելով պետության և հատկապես պետական կառավարման ողջ համակարգի նկատմամբ քաղաքացիների ունեցած վստահությունը՝ Հայ Պետական Ծառայողների Միությունը ջանքեր է գործադրում պետության նկատմամբ այդ վստահության բարձրացման և ամրապնդման համար: Միաժամանակ վստահաբար պնդելով, որ առանց բարոյահոգեբանական մթնոլորտի փոփոխության և հոգևոր արժեքների ներդրման հնարավոր չէ ազատվել այն արատներից, որոնք արմատավորվում են մեր հասարակական կյանքում և մասնավոր պետածառայական համակարգում, բանգի վերջինիս բարոյական նկարագիրը հասարակության կողմից միշտ ընկալվել է որպես չափամիջ, իսկ նրա բարոյագրկումը կհանգեցնի հասարակության բարոյագրկմանը:

Հիմք ընդունելով բարոյականության համամարդկային արժեքները և Հայ Առաքելական Եկեղեցու քրիստոնեական վարդապետությունը՝ Միությունը մշակել և քաղաքացիական ծառայության համակարգ է ներմուծել «Քաղաքացիական ծառայողի էթիկայի կանոնները», ինչպես նաև Գարեգին Բ Վեհափառ Հայրապետի օրհնությամբ և Միքայել եպիսկոպոս Աջապահյանի ամմիջական մասնակցությամբ ՀՀ աշխատանքի և սոցիալա-

կան հարցերի, առողջապահության, կրթության և գիտության նախարարությունների, ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի, ՀՀ պետական կառավարման ակադեմիայի և մի շարք այլ կազմակերպությունների համատեղ աշխատանքի շնորհիվ հասել է այն բանին, որ ընդունվել է քաղաքացիական ծառայողի «Էթիկայի համաձայնագրողների կանոնադրությունը», ինչով ենթաօրենսդրական մակարդակով ամրագրվել է Հայ Առաքելական Եկեղեցու մասնակցությունը այդ համաձայնագրողների աշխատանքներին:

Պետք է ուրախությամբ նշել, որ հաղթահարելով բավականին լուրջ խոչընդոտներ՝ Միությանը հաջողվեց ապահովել Եկեղեցու մասնակցությունը քաղաքացիական ծառայության ինստիտուտի ներսում ընթացող գործընթացներին: Իրականացված մեծածավալ հետազոտական աշխատանքի, ինչպես նաև բազմաթիվ սեմինար համոզիպումների և աշխատանքային խորհրդակցությունների շնորհիվ ի վերջո հնարավոր դարձավ ապացուցել հոգևոր ու բարոյական արժեքների գերակայությունների ամրագրման անհրաժեշտությունը և ցույց տալ դրանց ազդեցությամբ բարոյական վարքագծի դրական փոփոխությունների դիմամիկան: Ապացուցվեց անհատի սուբյեկտիվ գործողությունների ներքին արգելակների ազդեցության արդյունավետությունը մոտիվացիոն դաշտի վրա: Ունենալով գործունեության տարաբնույթ շարժառիթներ և ազատ լինելով կատարել և կամ չկատարել այս կամ այն գործողությունը՝ քաղաքացիական ծառայողը միշտ կարող է օրենքի տառի ներքո գտնել ինքնաարդարացման միջոց, իսկ հոգևոր արժեքների վրա խարսխված մարդկային խղճմտանքը խուսաճավելու այդպիսի հնարավորություն չի տալիս՝ քաղաքացիական ծառայողին քայլ առ քայլ մղելով օրինապաշտության և օրինակաճության դաշտ:

Եկեղեցին դարերի ընթացքում եղել է նաև ազգային ինքնակազմակերպման և ներքին ինքնուրույնության, բարոյականության, օրինակաճության և մշակութային ինքնության կրողն ու պահպանը, ինչը թույլ է տվել անխաթար պահել ինքնատիպությունը և յուրահատկությունը: Պատահական չէ, որ օտարներն անգամ տարանջատում չեն գտել հայ հասարակության և Եկեղեցու միջև՝ համարելով դրանք միևնույն և մեկ ամբողջություն: «Եվ կարծես Ազգային Եկեղեցի բացատրությունը հենց Հայ ազգի համար է կազմված»¹:

Արհեստականորեն տարանջատելով Եկեղեցին և պետությունը՝ այսպես կոչված «լիբերալ արժեքների» կողմնակիցները վերջինիս տվել են լոկ մեխանիկական բնույթ՝ ենթակա այլազան տարափոխությունների: Այս երևույթի ծագման, ընթացքի և հետևանքների մասին չէ, որ այստեղ ցանկանում ենք խոսել, քանզի այդ խնդիրները առանձին թեմայի մյուս են և հարկ է դրանց հատուկ անդրադառնալ: Այստեղ միայն նշենք, որ ինչպես մարմինը առանց հոգու մեռյալ է, այնպես էլ պետության ինստիտուտը առանց հոգևոր բաղադրիչի միայն մեխանիկական ազդեցությունների և հակազդեցությունների մի կոնցլուստ է, որը չունի պատմական հիշողություն, այդ հիշողության վրա խարսխված ներքին բովանդակային էություն և այդ էությամբ տրամաբանված նպատակային զարգացում:

Չունենալով կամ, որ առավել ցավալի է, անտեսելով վերը թվարկված չափանիշները՝ պետություն կոչվող կառույցի ընթացքը դառնում է ինքնանպատակ, որտեղ գործընթացների շարժառիթը միայն մեխանիկական վերարտադրությունն է, և այդ գերնպատակին

¹ Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյան, Հայոց Եկեղեցին, Կ. Պոլիս, 1911, էջ.10:

հասնելու համար այն պատրաստ է զոհաբերել ցանկացած արժեք: Այս պնդման լավագույն ապացույցը այն դյուրինությունն է, որով արևմտյան հանրամատչելիությունը ճանապարհ է հարթում իր համար՝ անբռնազբոս պահվածքով անցնելով պետությունների և ազգերի ճակատագրերի վրայով:

Հայ Պետական Ծառայողների Միությունը, համոզված լինելով ազգ, եկեղեցի, պետություն եռամիասնության անքակտելիությանը, գտնում է, որ միայն այս երեք բաղադրիչների ներդաշնակ՝ մեկը մյուսով ներթափանցված լինելու պարագայում է հնարավոր ազգի բյուրեղացումը և միասնականությունը:

Այս համատեքստում Միության կողմից Հայ Առաքելական Եկեղեցու հոգևոր-արժեքային համակարգը պետական այնպիսի կարևորագույն գործընթացի մեջ ներառելը, ինչպիսին քաղաքացիական ծառայողի բարոյական մկարագրի ձևավորումն է, համարվում է առաջնային և առաջին քայլ ու հետևողականորեն իրականացնելու է Եկեղեցու և հոգևոր արժեքների է՛լ ավելի խորը և համընդգրկուն ներթափանցումը հասարակական և պետական ինստիտուտներ: